



## Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2006թ. չորրորդ եռամսյակում /վերլուծություն/

2006թ. չորրորդ եռամսյակում հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 34355 գործարքներ, որոնց քանակը 2005թ. չորրորդ եռամսյակի համեմատ աճել է 12.7%-ով, իսկ 2006թ. երրորդ եռամսյակի համեմատ՝ 15.9%-ով:

2006թ. չորրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2006թ. չորրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2006թ. չորրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 14894 օտարման գործարքների 89.4% կազմել են առուվաճառքները, 10.2%՝ նվիրատվությունները և 0.4%՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման

գործարքների քանակի 34.9% արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 36.1% հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարաններ:

2006թ. չորրորդ եռամսյակում, 2005թ. չորրորդ եռամսյակի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակն աճել է 25.6%-ով, իսկ 2006թ. երրորդ եռամսյակի համեմատ՝ 16.2%-ով: 2006թ. չորրորդ եռամսյակում Երևան քաղաքում անշարժ գույքի 4447 առուվաճառքի գործարքների 67.1% արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում, 2005թ. չորրորդ եռամսյակի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը աճել է 23.1%-ով, իսկ 2006թ. երրորդ եռամսյակի համեմատ՝ 7.3%-ով:

2006թ. չորրորդ եռամսյակում Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով հետևյալ շուկայական միջինացված գները և դրանց փոփոխման միջակայքերը.

Համայնքներ	Նվազագույն և առավելագույն գները 2006թ. չորրորդ եռամսյակում /դրամ/	Միջին գները /դրամ/		
		չորրորդ եռամսյակ 2005թ.	չորրորդ եռամսյակ 2006թ.	երրորդ եռամսյակ 2006թ.
Կենտրոն	178900-1080000	325400	400700	384200
Արաբկիր	114300-895000	261500	319600	304400
Քանաքեռ-Զեյթուն	111100-454000	159200	213700	185800
Նոր-Նորք	92300-350000	152600	187800	173100
Ավան	99100-260000	134400	177500	160100
Էրեբունի	103800-347000	133100	187100	153800
Շենգավիթ	105100-400000	162900	200000	185900
Դավթաշեն	118000-284000	164900	208500	193100
Աջափնյակ	103800-450000	153200	189900	172900
Մալաթիա-Մեքաստիա	90000-295000	149200	179800	169800
Նուբարաշեն	57400-137500	86800	115900	110900
<b>Միջինը Երևանում /բացի Նորք-Մարաշից/</b>	<b>57400-1080000</b>	<b>171200</b>	<b>216400</b>	<b>199500</b>

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2006թ. չորրորդ եռամսյակում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի շուկայական միջին գները 2006թ. չորրորդ եռամսյակի համեմատ աճել են 8.5%-ով, իսկ 2005թ. չորրորդ եռամսյակի համեմատ աճել են՝ 26.4%-ով:

2006թ. չորրորդ եռամսյակում Երևանում իրականացված բազմաբնակարան շենքերի բնակարանների օտարման և առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների շարժերն ունեն աճի միտում:

2006թ. չորրորդ եռամսյակում մարզերում, բացառությամբ Երևանը, վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 1572 բնակարաններ, որոնց քանակը 2005թ. չորրորդ եռամսյակի համեմատ աճել է 11.6%-ով, իսկ 2006թ. երրորդ եռամսյակի համեմատ՝ 4.9%-ով:

2006թ. չորրորդ եռամսյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով հետևյալ շուկայական միջինացված գները և դրանց փոփոխման միջակայքերը.

Մարզեր	Քաղաքներ	Նվազագույն և առավելագույն գները 2006թ. չորրորդ եռամսյակում /դրամ/	Միջին գները /դրամ/		
			չորրորդ եռամսյակ 2005թ.	չորրորդ եռամսյակ 2006թ.	երրորդ եռամսյակ 2006թ.
Արագածոտն	Աշտարակ	60300 - 137000	50100	80100	67600
	Ապարան	18000 - 37000	23300	27100	26100
	Թալին	13600 - 53000	21700	29100	25700
Արարատ	Արտաշատ	39100 - 143000	40000	63400	53700
	Մասիս	36000 - 125000	51300	73600	61500
	Վեդի	22600 - 78000	33800	49800	42600
	Արարատ	19300 - 87000	37000	49800	42500
Արմավիր	Վաղարշապատ	71000 - 200000	74300	102100	89000
	Արմավիր	38700 - 172000	44500	70400	60300
	Մեծամոր	33000 - 123000	25100	46100	39200
Գեղարքունիք	Սևան	28300 - 98000	30100	46900	38800
	Գավառ	20400 - 58000	22300	30200	26300
	Մարտունի	22500 - 111000	36100	42500	38800
	Վարդենիս	13500 - 56000	19200	23400	21000
	Ճամբարակ	5900 - 31000	10700	13900	13200
Լոռի	Վանաձոր	27000 - 202000	41200	59000	53500
	Ստեփանավան	15000 - 79000	22800	28700	25200
	Սպիտակ	30300 - 71000	26900	40300	37700
	Ալավերդի	9600 - 44000	18200	22900	20900
	Տաշիր	11300 - 45000	20000	21900	20000
	Թումանյան	4100 - 11000	5200	5400	5300
	Շամլուղ	2300 - 8000	2800	3000	2900
	Ախթալա	6800 - 16000	10400	10900	10600
Կոտայք	Աբովյան	55000 - 207000	77200	118200	101900
	Նոր Հաճն	53100 - 150000	56100	80400	68600
	Բյուրեղավան	22700 - 108000	36500	57700	48800
	Եղվարդ	50200 - 105000	47500	73100	64100
	Հրազդան	20900 - 111000	28500	42500	38700
	Ծաղկաձոր	68000 - 198000	56700	80600	74300
Շիրակ	Զարենցավան	26300 - 98000	35300	50800	44200
	Գյումրի	25100 - 143000	42500	57500	51300
	Արթիկ	19600 - 76000	25500	37500	32100
Սյունիք	Մարալիկ	8400 - 35000	21600	23400	21700
	Գորիս	26800 - 107000	44900	56700	52500
	Կապան	29000 - 123000	31800	54900	46100
	Սիսիան	26700 - 75000	27900	46900	39000
	Մեղրի	20000 - 72000	23200	34700	30800
	Ագարակ	9000 - 50000	17700	22300	20200
	Քաջարան	20200 - 80000	16900	29200	27100
Վայոց Ձոր	Դաստակերտ	4500 - 11000	6400	6800	6600
	Վայք	20900 - 66000	30000	51100	39200
Եղեգնաձոր	Եղեգնաձոր	33800 - 117000	42400	63400	60000

	Զերմուկ	43600 - 214000	45800	82200	67400
Տավուշ	Դիլիջան	28100 - 109000	33800	56500	48100
	Իջևան	40600 - 209000	38500	69300	57700
	Բերդ	22100 - 71000	25900	31600	30300
	Նոյեմբերյան	8500 - 61000	14300	24900	20600
	Այրում	12000 - 25000	10000	18000	18000

2006թ. չորրորդ եռամսյակում հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի շուկայական միջին գները 2006թ. երրորդ եռամսյակի համեմատ աճել են 14.4%-ով, իսկ 2005թ. չորրորդ եռամսյակի համեմատ աճել են՝ 47.0%-ով:

2006թ. չորրորդ եռամսյակում հանրապետությունում բազմաբնակարան շենքերի բնակարանների օտարման և առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակի ամսեկան փոփոխման շարժերն ունեն աճի միտում:

2006թ. չորրորդ եռամսյակում հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 1549 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևանում՝ 331, մյուս մարզերում միասին վերցրած՝ 1218: 2005թ. չորրորդ եռամսյակի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակն աճել է 2.9%-ով, ընդ որում Երևան քաղաքում նվազել է 4.3%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ աճել 5.1%-ով: 2006թ. երրորդ եռամսյակի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 14.2%-ով, ընդ որում Երևանում նվազել՝ 2.6%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած աճել՝ 19.9%-ով:

2006թ. չորրորդ եռամսյակում Երևան քաղաքի համայնքներում շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը, և դրանց փոփոխման միջակայքերը.

Համայնքներ	Նվազագույն և առավելագույն գները 2006թ. չորրորդ եռամսյակում /դրամ/	Միջին գները /դրամ/		
		չորրորդ եռամսյակ 2005թ.	չորրորդ եռամսյակ 2006թ.	երրորդ եռամսյակ 2006թ.
Կենտրոն	135000 - 900200	340700	402800	391300
Արաբկիր	90000 - 550100	272700	322000	307100
Քանաքեռ-Զեյթուն	67500 - 300100	162500	215600	188300
Նորք-Մարաշ	90000 - 450100	181900	194500	188300
Ավան	90000 - 360100	138800	179800	161400
Էրեբունի	67500 - 280100	138700	188800	156100
Շենգավիթ	67500 - 300500	168300	201600	187100
Դավթաշեն	90000 - 405100	169200	210300	194900
Աջափնյակ	67500 - 310100	157100	191900	175200
Մալաթիա-Սեբաստիա	67500 - 405100	152200	181800	172200
Նուբարաշեն	40500 - 185000	89800	117800	113000
<b>Միջինը Երևանում /բացի Նոր-Նորքից/</b>	<b>40500 - 900200</b>	<b>179300</b>	<b>218800</b>	<b>203200</b>

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2006թ. չորրորդ եռամսյակում անհատական բնակելի տների շինության 1 քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/ 2006թ. երրորդ եռամսյակի համեմատ աճել են 7.7%-ով, իսկ 2005թ. չորրորդ եռամսյակի համեմատ աճել են 22.0%-ով:

2006թ. չորրորդ եռամսյակում Երևան քաղաքում իրականացված անհատական բնակելի տների օտարման և առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակի փոփոխման շարժերն ունեն համապատասխանաբար նվազման և կայունացման միտում:

2006թ. չորրորդ եռամսյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/ և դրանց փոփոխման միջակայքերը.

Մարզեր	Քաղաքներ	Նվազագույն և առավելագույն գները 2006թ. չորրորդ եռամսյակում /դրամ/	Միջին գները /դրամ/		
			2005թ. չորրորդ եռամսյակ	2006թ. չորրորդ եռամսյակ	2006թ. երրորդ եռամսյակ
Արագածոտն	Աշտարակ	29100 - 98000	51400	81400	69900
	Ապարան	13500 - 36000	24600	28300	27800
	Թային	13600 - 36000	23300	30100	26700
Արարատ	Արտաշատ	22500 - 141000	41200	65000	54800
	Մասիս	25000 - 98000	52800	74800	62800
	Վեդի	22500 - 67500	35000	51300	43700
	Արարատ	22500 - 76800	38500	51200	43600
Արմավիր	Վաղարշապատ	54100 - 164200	75800	103400	90300
	Արմավիր	22500 - 126000	46200	71500	61400
Գեղարքունիք	Սևան	18000 - 90600	35300	48200	41000
	Գավառ	10000 - 37800	24300	31600	27500
	Մարտունի	22200 - 68000	38700	43700	40100
	Վարդենիս	11000 - 32500	21500	24800	22400
	Ճամբարակ	4500 - 32600	12400	15000	14700
Լոռի	Վանաձոր	23200 - 116800	42300	60700	54700
	Ստեփանավան	13500 - 40200	26900	30000	27200
	Մայիտակ	20000 - 58600	28700	41600	38600
	Ալավերդի	9000 - 31500	19600	24200	22000
	Տաշիր	9000 - 36500	21200	23200	21400
	Թումանյան	4500 - 18000	6700	7200	6900
	Շամլուղ	2300 - 13500	4200	4600	4300
	Ախթալա	9000 - 22500	11900	12500	12100
Վոտայք	Աբովյան	45500 - 191600	81300	119600	103700
	Լոր Հաճն	42500 - 105800	57500	81800	69700
	Բյուրեղավան	22200 - 81400	37500	58800	49900
	Եղվարդ	30200 - 90300	49800	74400	65200
	Հրազդան	18000 - 74000	30600	43700	39900
	Ծաղկաձոր	40000 - 112500	57900	85100	76200
	Չարենցավան	18000 - 79300	38100	52000	45300
Շիրակ	Գյումրի	28200 - 129000	44200	58800	52600
	Արթիկ	13300 - 62400	27600	38700	33200
	Մարալիկ	13500 - 40000	23500	24800	23700
Սյունիք	Գորիս	18000 - 79900	46000	58000	54000
	Կապան	22000 - 94000	34000	56200	47300
	Միսիան	20000 - 66400	28900	48400	40000

	Մեղրի	13500 - 44800	24400	36200	31700
	Ագարակ	13300 - 36000	20000	23600	21300
	Դաստակերտ	4500 - 18000	8600	8900	8700
Վայոց Ձոր	Վայք	26000 - 55600	31000	52500	40200
	Եղեգնաձոր	22200 - 118400	45100	65000	61200
	Ջերմուկ	26500 - 191600	31200	40600	37700
Տավուշ	Դիլիջան	26600 - 97500	35300	57600	49300
	Իջևան	22200 - 101100	39900	70400	58800
	Բերդ	20000 - 71200	26800	32700	31300
	Նոյեմբերյան	9000 - 31500	15400	26100	21500
	Այրում	5200 - 28000	10700	19200	19200

2006թ. չորրորդ եռամսյակում հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/ 2006թ. երրորդ եռամսյակի համեմատ աճել են 13.8 %-ով, իսկ 2005թ. չորրորդ եռամսյակի համեմատ աճել են՝ 41.2-ով%:

2006թ. չորրորդ եռամսյակում հանրապետության մարզերում իրականացված անհատական բնակելի տների օտարման և առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակի փոփոխման շարժերն ունեն աճի միտում:

Ընդհանուր առմամբ, 2006թ. չորրորդ եռամսյակում հանրապետությունում օտարվել են 6032 միավոր /6219.36 հա/ հողեր, որից Երևանում՝ 416 միավոր /67.13 հա/, այդ թվում ՀՀ հողային օրենսգրքի փոփոխության 23-րդ հոդվածի համաձայն, օտարվել են 304 միավոր /61.10 հա/ հողեր, որից Երևանում՝ 109 միավոր /41.574 հա/: Օտարված հողերը ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 2753 միավոր /5835.73 հա/, որից Երևանում՝ 2 միավոր /0.33 հա/,
- բնակելի կառուցապատման հողեր՝ 2073 միավոր /190.73 հա/, որից Երևանում՝ 228 միավոր /15.42 հա/,
- հասարակական կառուցապատման հողեր՝ 1060 միավոր /148.7 հա/, որից Երևանում՝ 162 միավոր /37.65 հա/,
- արդյունաբերական օբյեկտների հողեր՝ 69 միավոր /26.96 հա/, որից Երևանում՝ 24 միավոր /13.73 հա/,
- հատուկ պահպանվող տարածքի հողեր՝ 47 միավոր /9.43 հա/: Երևանում հատուկ պահպանվող տարածքի հողերի օտարման գործարքներ չեն գրանցվել,
- էներգետիկայի օբյեկտների հողեր՝ 28 միավոր /2.15 հա/: Երևանում էներգետիկայի օբյեկտների հողերի օտարման գործարքներ չեն գրանցվել:
- կապի օբյեկտների հողեր՝ 1 միավոր /0.01 հա/: Երևանում կապի օբյեկտների հողերի օտարման գործարքներ չեն գրանցվել:
- ջրային հողեր՝ 1 միավոր /5.64 հա/: Երևանում ջրային հողերի օտարման գործարքներ չեն գրանցվել:

2006թ. չորրորդ եռամսյակում հանրապետությունում օտարված հողերից 5749 միավորի /5791.64 հա/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 393 միավոր /65.48 հա/, նվիրատվության գործարքներ՝ 248 միավոր /414.87 հա/, որից Երևանում՝ 18 միավոր /1.42 հա/ և փոխանակության գործարքներ՝ 35 միավոր /12.86 հա/, որից Երևանում՝ 5 միավոր /0.23 հա/:

Հանրապետությունում 2006թ. չորրորդ եռամսյակում, 2005թ. չորրորդ եռամսյակի համեմատությամբ, հողերի առուվաճառքի գործարքների քանակական աճը կազմել է 62.9%: Ընդ որում գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ

առուվաճառքի գործարքների քանակը աճել է 46.1%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ՝ աճել է 75.7%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ՝ 2.3 անգամ, հատուկ պահպանվող տարածքի հողերի նկատմամբ՝ 3.6 անգամ, էներգետիկայի օբյեկտների հողերի նկատմամբ՝ 28 գործարքով, ջրային և կապի օբյեկտների հողերի նկատմամբ՝ 1-ական գործարքով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 2612.17 հա, որից 2589.60 հա գյուղատնտեսական նշանակության են: Վաճառված հողերի քանակի 42.1%-ը կամ 2420 գործարքներ /3138.88 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում՝ 105 գործարքներ /33.62 հա/, իսկ 57.7%-ը կամ 3318 միավորը /2648.60 հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում՝ 280 միավոր /29.27 հա/: 2006թ. չորրորդ եռամսյակում գրանցվել են հողերի վարձակալության իրավունքի վաճառքի 11 գործարք /4.16 հա/, այդ թվում նաև կառուցապատման իրավունքի վաճառքի գործարքները:

Ստորև ներկայացվում է 2006թ. չորրորդ եռամսյակում պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունը ըստ մարզերի, որտեղ ներառված չեն հատուկ պահպանվող տարածքների, էներգետիկայի, կապի օբյեկտների, ջրային հողերը և վարձակալության իրավունքի վաճառքը.

ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	<i>Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող</i>								<i>Մասնավոր սեփականություն հանդիսացող</i>							
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի						բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	18	8.76	20	1.37	67	23.48	1	0.10	6	4.97	188	12.76	85	11.44
Արագածոտն	140	627.45	0	0.00	11	1.41	51	2.74	144	160.81	0	0.00	129	12.35	3	0.32
Արարատ	187	797.14	16	7.97	231	20.60	179	5.21	312	161.00	0	0.00	224	20.21	11	0.22
Արմավիր	231	1078.53	11	0.99	17	1.55	114	2.12	318	1511.06	0	0.00	193	17.38	16	0.53
Գեղարքունիք	7	4.80	1	0.35	25	2.47	43	3.10	37	29.46	1	0.20	41	5.93	6	2.22
Լոռի	8	12.51	3	1.08	15	0.93	53	10.79	243	130.25	0	0.00	24	3.17	14	0.41
Կոտայք	220	312.95	3	0.39	135	12.59	139	13.89	436	237.13	2	0.55	530	54.93	22	11.17
Շիրակ	42	108.56	1	0.01	87	3.50	70	4.71	67	66.06	0	0.00	22	1.66	12	32.86
Սյունիք	2	0.28	2	0.69	5	0.25	44	1.46	59	87.17	1	0.25	8	0.82	7	0.04
Վայոց Ձոր	36	31.37	0	0.00	8	0.63	71	5.07	32	35.44	0	0.00	18	2.27	6	0.17
Տավուշ	3	9.19	4	0.74	13	0.75	22	2.18	57	26.84	0	0.00	27	3.22	4	0.26
Ընդամենը	876	2982.78	59	20.98	567	46.05	853	74.75	1706	2445.32	10	5.97	1404	134.70	186	59.64

Ստորև ներկայացվում է 2006թ. չորրորդ եռամսյակում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունը ըստ մարզերի և ըստ հողերի տեսակների, բացառությամբ հատուկ պահպանվող տարածքների, ջրային, էներգետիկայի օբյեկտների հողերի.

ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ուղղակի վաճառք								Աճուրդ վաճառք									
	Ընդամենը		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանա- կության հողերի		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակա կան կառու ցապ. հողերի								բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակա կան կառուց ապ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/
Երևան	90	31.46	18	8.76	11	0.73	61	21.96	15	2.16	0	0.00	0	0.00	9	0.64	6	1.52
Արագածոտն	17	0.27	0	0.00	0	0.00	17	0.27	185	631.33	140	627.45	0	0.00	11	1.41	34	2.47
Արարատ	72	8.24	8	6.75	1	0.17	63	1.32	541	822.68	187	797.14	8	1.22	230	20.43	116	3.89
Արմավիր	3	0.02	0	0.00	0	0.00	3	0.02	362	967.68	223	963.03	11	0.99	17	1.55	111	2.11
Գեղարքունիք	9	0.54	1	0.35	2	0.16	6	0.03	69	10.17	7	4.80	0	0.00	23	2.31	37	3.06
Լոռի	18	3.87	1	0.004	2	0.08	15	3.79	61	21.44	8	12.51	2	1.08	13	0.85	38	7.00
Կոտայք	35	2.17	1	0.16	1	0.14	33	1.87	461	337.56	219	312.86	2	0.23	134	12.45	106	12.02
Շիրակ	10	0.20	0	0.00	8	0.19	2	0.01	189	116.08	41	108.06	1	0.01	79	3.31	68	4.70
Սյունիք	7	0.47	1	0.43	0	0.00	6	0.04	46	2.22	2	0.28	1	0.27	5	0.25	38	1.42
Վայոց Ձոր	16	1.98	0	0.00	0	0.00	16	1.98	99	35.10	36	31.37	0	0.00	8	0.63	55	3.10
Տավուշ	30	1.90	4	0.74	10	0.57	16	0.59	12	10.95	3	9.19	0	0.00	3	0.18	6	1.58
Ընդամենը	307	51.12	34	17.19	35	2.04	238	31.88	2040	2957.37	866	2866.69	25	3.80	532	44.01	615	42.87

Հանրապետությունում 2006թ. չորրորդ եռամսյակում արձանագրվել են նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 10 գործարքներ /116.09 հա ընդհանուր մակերեսով/:

Հանրապետությունում 2006թ. չորրորդ եռամսյակում, 2005թ. չորրորդ եռամսյակի համեմատությամբ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակական աճը կազմել է 2.7 անգամ: Ընդ որում Երևանում նվազել է 82.1%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած աճել է 3.1 անգամ: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակը աճել է 2.7 անգամ, բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի նկատմամբ՝ 65.2%-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ՝ 6.2 անգամ, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ՝ 2.8 անգամ, հատուկ պահպանվող տարածքի հողերի նկատմամբ՝ 4.6 անգամ, ջրային հողերի նկատմամբ՝ 1 գործարքով և էներգետիկայի օբյեկտների հողերի նկատմամբ՝ 5 գործարքով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատավճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /հա/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
<b>Արագածոտնի մարզ</b>										
Աշտարակ	107	425.56	34.0	3816.7	278.6	104	111.48	362.2	6772.5	2342.3
Ապարան	4	8.10	228.3	309.4	270.0	12	20.62	90.6	767.6	344.3
Թային	29	193.79	4.2	207.7	68.9	16	9.53	90.6	758.5	334.2
Ծաղկահովիտ						8	18.22	77.0	948.2	162.3
<b>Արարատի մարզ</b>										
Արտաշատ	75	102.92	10.0	2701.4	784.9	135	41.62	335.1	5418.0	1252.3



Մասիս	54	158.78	30.0	5057.5	376.6	78	72.75	181.1	6772.5	1623.4
Վեդի	58	535.44	17.4	1002.0	207.5	95	43.66	203.8	4515.0	1037.6
Արմավիրի մարզ										
Արմավիր	75	89.55	30.0	3591.0	852.7	137	105.91	294.3	4063.5	818.4
Բաղրամյան	60	612.42	20.3	73.0	34.5	55	1329.41	90.6	677.3	511.5
Վաղարշապատ	88	261.06	17.8	2464.0	166.2	119	72.38	443.7	9030.0	1349.1
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						17	10.07	190.2	496.7	335.5
Ճամբարակ	5	3.70	168.1	1000.0	636.3	1	0.81	45.3	541.8	142.3
Մարտունի						7	3.18	45.3	1806.0	452.4
Սևան	1	0.10	480.0	480.0	480.0	3	0.52	45.3	451.5	188.3
Վարդենիս	1	1.00	184.0	184.0	184.0	9	14.87	27.2	532.8	213.1
Լոռու մարզ										
Ալավերդի						192	89.41	163.0	2483.3	938.4
Գուգարք	5	2.16	362.5	1210.0	789.3	29	9.99	226.4	2709.0	892.0
Սպիտակ	2	0.35	766.0	766.0	766.0	2	0.30	226.4	1490.0	491.6
Ստեփանավան	1	10.00	450.0	450.0	450.0	16	24.32	90.6	2257.5	345.0
Տաշիր						4	6.23	45.3	451.5	197.8
Կոտայքի մարզ										
Աբովյան	59	106.57	35.1	1172.5	357.8	190	75.28	271.7	11287.5	2986.2
Եղվարդ	77	147.65	35.8	12131.6	882.2	173	124.06	172.1	11287.5	2099.3
Հրազդան	83	58.64	68.8	4133.3	350.4	59	29.22	113.2	2709.0	771.7
Շիրակի մարզ										
Այսուրյան	4	7.00	50.0	265.0	215.2	38	40.33	249.0	1693.1	415.9
Ամասիա						4	3.33	36.2	237.0	104.6
Անի	22	72.58	75.4	2320.0	389.7	20	20.60	108.7	361.2	210.2
Աշոցք								45.3	112.9	109.2
Արթիկ	15	28.48	168.0	330.0	225.3	5	1.80	63.4	1083.6	160.2
Սյունիքի մարզ										
Գորիս						22	35.76	90.6	673.3	321.5
Կապան						1	0.48	54.3	841.6	214.6
Մեղրի	2	0.28	800.0	809.5	804.8	5	0.82	181.1	1784.2	429.5
Միսիան						31	50.11	45.3	631.2	198.2
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	27	29.87	31.6	1269.5	180.8	23	23.94	117.7	2524.8	1227.9
Վայք	9	1.50	37.2	133.3	76.0	9	11.50	54.3	1430.7	483.8
Տավուշի մարզ										
Բերդ						14	2.93	45.3	841.6	327.1
Իջևան	1	0.10	473.0	473.0	473.0	3	2.22	240.0	1683.2	777.2
Նոյեմբերյան	2	9.09	488.3	488.3	488.3	40	21.69	45.3	3509.5	463.8

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծ լինելը կապված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2006թ. չորրորդ եռամսյակում բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների				Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների			
	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000 .0քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/	

			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
<b>Արագածոտնի մարզ</b>										
Աշտարակ	8	10060.0	73.3	2583.3	949.4	120	116314.3	113.2	3612.0	2129.1
Ապարան						6	5147.0	113.2	632.1	178.0
Թալին	3	4030.0	72.9	233.1	140.8	3	2040.0	45.3	361.2	80.2
Ծաղկահովիտ								45.3	361.2	67.3
<b>Արարատի մարզ</b>										
Արտաշատ	110	113023.0	115.3	426.0	224.5	65	66618.0	135.8	2709.0	814.1
Մասիս	115	86264.0	188.1	1561.9	967.8	114	91633.0	135.8	9030.0	1028.2
Վեդի	5	5000.0	407.0	407.0	407.0	42	40973.0	113.2	993.3	590.5
<b>Արմավիրի մարզ</b>										
Արմավիր	4	4800.0	291.6	1575.0	944.3	47	45703.0	135.8	2257.5	959.3
Բաղրամյան	2	1121.0	299.7	360.0	329.9	8	10570.0	81.5	270.9	116.9
Վաղարշապատ	11	9550.0	80.0	812.5	533.6	137	116567.0	135.8	4515.0	1319.7
<b>Գեղարքունիքի մարզ</b>										
Գավառ	8	8896.0	176.7	1304.1	559.3	6	6810.0	135.8	903.0	325.0
Ճամբարակ	8	8000.0	145.0	145.0	145.0	5	7387.0	45.3	135.5	86.8
Մարտունի						19	25320.0	90.6	451.5	193.0
Սևան	1	600.0	683.1	683.1	683.1	4	5352.0	90.6	903.0	126.3
Վարդենիս	6	5619.0	175.0	1351.4	384.6	7	14440.0	45.3	225.8	91.0
<b>Լոռու մարզ</b>										
Ալավերդի						6	7110.0	67.9	270.9	106.3
Գուգարք	2	1433.0	68.5	800.0	434.3	7	6828.0	67.9	2347.8	516.6
Սյլիտակ	5	3290.0	76.6	222.1	105.7	8	10700.0	63.4	451.5	109.8
Ստեփանավան	6	3751.0	93.5	277.3	244.2	3	7100.0	45.3	270.9	90.4
Տաշիր								45.3	135.5	66.3
<b>Կոտայքի մարզ</b>										
Արուլյան	3	2466.0	300.0	2309.6	1113.8	213	200431.0	135.8	6772.5	1576.6
Եղվարդ	64	57300.0	641.0	1650.0	1385.6	281	309850.0	135.8	6772.5	1697.6
Հրազդան	67	64700.0	145.0	1700.0	298.3	35	37635.0	135.8	9030.0	1102.6
<b>Շիրակի մարզ</b>										
Ախուրյան	51	17169.8	179.6	4750.0	2077.1	6	5069.0	113.2	1535.1	295.2
Ամասիա						2	3371.0	45.3	135.5	68.5
Անի						2	85.7	67.9	180.6	89.9
Աշոցք						2	1200.0	40.8	135.5	56.8
Արթիկ	28	15938.8	63.0	2222.2	348.9	10	6920.0	67.9	925.6	138.9
<b>Սյունիքի մարզ</b>										
Գորիս	5	2500.0	416.7	2000.0	977.2	2	1490.0	67.9	541.8	217.4
Կապան								67.9	632.1	193.6
Մեղրի								67.9	406.4	108.8
Սիսիան						6	6571.0	67.9	406.4	128.2
<b>Վայոց Ձորի մարզ</b>										
Եղեգնաձոր	7	2700.0	290.7	687.5	647.3	16	20515.0	67.9	1128.8	243.0
Վայք	1	3600.0	73.6	73.6	73.6			77.0	632.1	110.2
<b>Տավուշի մարզ</b>										
Բերդ								45.3	632.1	82.5
Իջևան	3	1800.0	283.5	403.3	323.4	23	28735.0	67.9	1354.5	351.7
Նոյեմբերյան						4	3480.0	45.3	632.1	111.7

2006թ. չորրորդ եռամսյակում հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել է նախկինում անհատույց սեփականաշնորհման 52 գործարքներ 8.29 հա մակերեսով, ընդ որում 28-ը՝ Արարատի /5.60 հա/, 12-ը՝ Գեղարքունիքի /0.61 հա/, 9-ը՝ Լոռու /1.58 հա/ և 3-ը՝ Տավուշի /0.50 հա/ մարզերում:

2006թ. չորրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 2214 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 6.4%: Ընդ որում, վարձակալության գործարքների 11.4% իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

2005թ. չորրորդ եռամսյակի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը նվազել է 36.6%-ով, իսկ 2006թ. երրորդ եռամսյակի համեմատ՝ 18.8%-ով:

2006թ. չորրորդ եռամսյակում հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 177 բնակարանների, 72 անհատական բնակելի տների, 860 հասարակական, 124 արտադրական նշանակության օբյեկտների, 963 միավոր /13688.14 հա/ հողերի, 17 ավտոտնակների և 1 այգետնակների վարձակալության գործարքներ: Հողերի կառուցապատման և անհատույց օգտագործման իրավունքների պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2006թ. չորրորդ եռամսյակում Երևան քաղաքում պետական սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 140 վարձակալության գործարքների քանակը 2005թ. չորրորդ եռամսյակի համեմատ նվազել է 62.5%-ով, իսկ 2006թ. երրորդ եռամսյակի համեմատ աճել՝ 4.2 անգամ:

2006թ. չորրորդ եռամսյակում հանրապետությունում վարձակալված 13688.14 հա հողերից 18.13 հա վարձակալվել են Երևանում: Մյուս մարզերում վարձակալված 13670.01 հա հողերի 60.5% կամ 8265.92 հա, կազմել են գյուղատնտեսական նշանակության, 29.76 հա՝ բնակավայրերի, 0.03 հա՝ արդյունաբերական օբյեկտների, 6.09 հա՝ էներգետիկայի օբյեկտների, 12.00 հա՝ անտառային, 14.52 հա՝ ընդերքօգտագործման, 5341.69 հա՝ հատուկ պահպանվող տարածքների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Արարատի մարզում՝ 5671.57 հա, որից 340.17 հա՝ գյուղատնտեսական նշանակության: Համայնքների վարչական սահմաններից դուրս վարձակալվել են 5950.00 հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

Ստորև ներկայացվում է 2006թ. չորրորդ եռամսյակում համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն ըստ մարզերի.

<b>Մարզի անվանումը</b>	<b>Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական.նշ հողերի</b>		<b>Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող գյուղատնտեսական.նշ հողերի</b>	
	Վարձակալության գործարքների քանակները /միավոր/	Վարձակալված հողերի մակերեսները /հա/	Վարձակալության գործարքների քանակները /միավոր /	Վարձակալված հողերի մակերեսները /հա/
Արագածոտն	6	289.00	70	317.61
Արարատ	0	0.00	30	340.17
Արմավիր	0	0.00	32	106.59
Գեղարքունիք	1	355.00	45	118.49
Լոռի	1	2.00	107	463.67
Կոտայք	12	1186.00	39	165.11
Շիրակ	4	3843.00	140	463.58
Սյունիք	6	275.00	19	250.70
Վայոց Ձոր	0	0.00	24	69.68
Տավուշ	0	0.00	9	20.33
<b>Ընդամենը</b>	<b>30</b>	<b>5950.00</b>	<b>515</b>	<b>2315.93</b>

2006թ. չորրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 4355 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 12.7%: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2005թ. չորրորդ եռամսյակի համեմատ աճել է 37.7%-ով, իսկ 2006թ. երրորդ եռամսյակի համեմատ՝ 33.0%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /48.2%/, առանձնատների /19.8%/, հասարակական նշանակության օբյեկտների /12.1%/ և հողերի /14.1%/ նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1905 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2005թ. չորրորդ եռամսյակի համեմատ աճել է 25.6%-ով, իսկ 2006թ. երրորդ եռամսյակի համեմատ՝ 12.1%-ով:

2006թ. չորրորդ եռամսյակում հանրապետությունում գրավադրվել են 1396.57 հա մակերեսով հողեր, որից 8.33 հա՝ Երևանում: Ընդ որում գրավադրված հողերի 94.1% կամ 1314.52 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են /այդ թվում՝ 0.82 հա Երևանում/: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արմավիրի մարզում՝ 687.79 հա, որից 686.54 հա՝ գյուղատնտեսական նշանակության:

2006թ. չորրորդ եռամսյակում գրավադրման գործարքների ամսեկան քանակների փոփոխման շարժն ունի աճի միտում:

2006թ. չորրորդ եռամսյակում հանրապետությունում արձանագրվել են հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների ապապետականացման միջոցով մասնավորեցման, համապատասխանաբար 36 և 20 գործարքներ, որոնց ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 0.2%: 2005թ. չորրորդ եռամսյակի համեմատ, մասնավորեցման գործարքների քանակը աճել է 1.8%-ով, իսկ 2006թ. երրորդ եռամսյակի համեմատ՝ 75.0%-ով: 2006թ. չորրորդ եռամսյակում մասնավորեցման գործարքների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում՝ 19.6%: 2006թ. չորրորդ եռամսյակում մասնավորեցման գործարքների ամսեկան քանակների փոփոխման շարժն ունի նվազման միտում:

2006թ. չորրորդ եռամսյակում հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 5496 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2005թ. չորրորդ և 2006թ. երրորդ եռամսյակների համեմատ աճել է 15.8%-ով: Առաջնային գրանցումների ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 16.0%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /34.3%/:

## ***ԱԳԿՊԿ լրատվական ծառայություն***